ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043-Ա/13

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս ռեկտորի պաշտոնակատար Լ. Արզումանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ա որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **7 743 600** (յոթ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և

կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011041630
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Վանֆարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ամիրյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900018001934
ՀՎՀՀ 02509193
Ռեկտորի պաշտոնակատար՝

Լ. Արզումանյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 1
2022 թ. դեկտեմբերի -ին
կնքված N 2043 -Ն/13 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Բարձրագույն ուսումնական հաստատությունների և ««Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի նյութատեխնիկական բազայի համալրում և գույքով ապահովում	«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի անհրաժեշտ գույքի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքը ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Նոր գույքով ապահովված ինստիտուտի մասնաճյուղ	01.09.2023թ.	7 743 600
		Ընդամենը՝				**7 743 600**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 90001104630
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն
«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ամիրյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900018001934
ՀՎՀՀ 02509193
Ռեկտորի պաշտոնակատար՝
Է. Արզումանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2

2022 թ. դեկտեմբերի -ին

կնքված N 2043-Ն/13 պայմանագրի

«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի նախահաշիվ

N/N	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*	*Քանակ*	*Միավորի արժեք /ՀՀ դրամ/*	*Ընդամենը /ՀՀ դրամ/*
1	Մեծ պահարան ապակյա դռներով	190x80x40	3	60,000	180,000
2	Մեծ պահարան փակ	190x120x50	4	83,500	334,000
3	Փոքր պահարան /տումբա/	80x70x40	6	25,000	150,000
4	Ուսանողական սեղան	120x80x50	55	18,000	990,000
5	Ուսանողական մետաղական աթոռ	-	110	15,000	1,650,000
6	Դասախոսի սեղան	120x80x55	9	43,500	391,500
7	Աշխատանքային գրասեղան դարակներով	130x80x55	4	51,000	204,000
8	Սեղան	100x80x60	2	17,500	35,000
9	Т-աձև սեղան	150x80x60, 90x77x60	1	79,500	79,500
10	Գրմյորի սեղան լույսերով	100x1500x40	1	76,000	76,000
11	Խոհանոցի սեղան՝ 4 աթոռով	-	1	55,000	55,000
12	Խոհանոցային բուֆետ երկհարկանի, լվացարանով	(120×70×40; 120×70×35	1	125,000	125,000
13	Պարասրահի հայելիներ	-	10	30,000	300,000
14	Քանդվող-հավաքվող բեմ	15 ք/մ	1	180,000	180,000
15	Պարասրահի ձող	8մ.	-	22,000	22,000
16	Դասախոսի աթոռ	-	9	13,000	117,000
17	Փափուկ աթոռ	-	20	7,000	140,000
18	Բազկաթոռ տնօրենի	-	1	75,000	75,000
19	Բազմոց փոքր	-	1	90,000	90,000
20	Աղբի դույլ փակ	-	11	3,000	33,000
21	Աղբի դույլ բաց	-	4	1,500	6,000
22	Գրատախտակ	-	9	30,000	270,000
23	Շերտավարագույր	-	6	180,000	1,080,000
24	Լոգարանի հայելի	0,7x0,5	4	8,900	35,600
25	Համակարգիչ	-	3	130,000	390,000
26	Գունավոր պրոժեկտոր շտատիվի վրա	-	2	70,000	140,000

27	Սպորտային մատ	1x2,0 սմ	1	25,000	25,000
28	Լինոլեում թաղիքով	32մ		16000 /1մ²/	512,000
29	Լուսարձակներ 500F	-	4	10,000	40,000
30	Led լուսարձակներ 500F	-	2	6,500	13,000
31	Սպլիտեր	-	1	5,000	5,000
ԸՆԴԱՄԵՆԸ					7,743,600

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 90001104630
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ամիրյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900018001934
ՀՎՀՀ 02509193
Ռեկտորի պաշտոնակատար՝

Լ. Արզումանյան
(ստորագրություն)

Կ.Տ